

**Ղարաբաղյան հակամարտության հարցը հայ-լեհական
առնչություններում 1991-2018 թթ.**

Մատինյան Հենրի

***Հանգուցային բառեր.** Հայաստան, Լեհաստան, Արցախ, պատերազմ,
խաղաղություն, բանակցություն, քննարկում, կարգավիճակ*

Նախաբան

Հայաստանի Երրորդ Հանրապետության հռչակումից հետո մինչ 1998 թվականը հայ-լեհական պաշտոնական հարաբերությունները գտնվում էին սաղմնային վիճակում, կողմերում չկային ռեզիդենտ դիվանագիտական ներկայացուցչություններ: Մակերեսային էին նաև քաղաքական շփումներն ու համագործակցությունը: Տարբեր էին երկու երկրների պետական առաջնահերթությունները. Լեհաստանի պարագայում՝ ԵՄ և Հյուսիսատլանտյան դաշինքի անդամակցությանը միտված հետևողական քաղաքականություն, իսկ Հայաստանի պարագայում՝ Արցախյան պատերազմ, հետպատերազմյան հետևանքների վերացման ու սոցիալ-տնտեսական դրության կայունացման փորձեր և այլն: Իրավիճակը փոխվեց 1990-ական թվականների երկրորդ կեսից, երբ Լեհաստանը ամրապնդեց իր միջազգային դիրքերը, սկսեց հանդես գալ որպես Արևելյան Եվրոպայի առաջնորդ պետություն, որով պայմանավորված էլ սկսեց ակտիվ ուշադրություն դարձնել կովկասյան հանրապետությունների հետ համագործակցությանը: Նույն ժամանակահատվածում Հայաստանը սկսեց աստիճանաբար դուրս գալ ներքին ծանր իրավիճակից և իր քաղաքական ու տնտեսական հիմնախնդիրները լուծելու համար սկսեց փնտրել միջազգային վստահելի գործընկերներ:

**Ղարաբաղյան հակամարտության կարգավորման հարցը
հայ-լեհական պաշտոնական քննարկումներում**

Նորանկախ Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականության առաջնահերթություններից էր արցախյան հակամարտության վերաբերյալ միջազգային հայանպաստ դիրքորոշում ձևավորելը: Հայ-լեհական պաշտոնական առնչություններում դարաբաղյան հարցի քննարկման առաջին վկայություն կարելի է համարել 1993 թ. հունիսի 27-ին Երևանում Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարի առաջին տեղակալ Ժիրայր Լիպարիտյանի և Ռուսաստանի

Դաշնությունում Լեհաստանի դեսպանության պատվիրակության անդամ լիազոր նախարար Վիկտոր Ռոսսի և առաջին քարտուղար Միեչիսլավ Չուդեցի միջև տեղի ունեցած հանդիպումը [1, 60]: Լեհ պաշտոնյաներին հայկական կողմը ներկայացրեց, որ դարաբաղյան հարցը ոչ թե տարածքային խնդիր է, այլ սեփական ճակատագիրը տնօրինելու ժողովրդի իրավունքի հարց, ներկայացվեց տեղեկատվություն ԵԱՀԿ Մինսկի խմբի գործունեության և ընդունված որոշումների վերաբերյալ: Մասնավորապես՝ հայ փոխարտգործնախարարը նշեց, որ միջազգային հանրությունը, այդ թվում՝ Մինսկի խմբի նախագահ Մարիո Ռաֆֆաելլին, դատապարտել էին Արցախի ինքնապաշտպանական ուժերի կողմից Ակնա քաղաքի գրավումը, սակայն ոչ մի արձագանք չէր ստացվել այն ժամանակ, երբ ուրբակոծվում էին Արցախի հայկական և անկախ Հայաստանի տարածքները: Միջազգային հանրության կողմից որևէ կանխարգելիչ քայլ չձեռնարկելը հայկական ուժերին ստիպեց վերահսկողություն հաստատել Ակնայի նկատմամբ, որպեսզի լռեցվեին մահաբեր արկերի օջախները [1, 61]: Հանդիպման ընթացքում հայկական կողմը կարևորեց նաև Արցախը բանակցությունների առանձին կողմ ճանաչելու անհրաժեշտությունը:

Հաջորդիվ դարաբաղյան հարցը քննարկվեց 1997 թ. դեկտեմբերի 19-21-ը Դանիայի մայրաքաղաք Կոպենհագենում ԵԱՀԿ արտաքին գործերի նախարարների հանդիպման ընթացքում Հայաստանի արտաքին գործերի նախարար Ալեքսանդր Արզումանյանի և Լեհաստանի արտաքին գործերի նախարար Բրոնիսլավ Գերեմեկի միջև տեղի ունեցած առանձնազրույցի ընթացքում, որտեղ կարևորվեց խաղաղ ճանապարհով արցախյան համակամարտության կարգավորման հարցը [4, 26]:

Լեհական կողմը արցախյան հարցում հստակ ընդգծված ձևով պաշտպանում էր տարածքային ամբողջականության սկզբունքը, որ մեկ անգամ ընդգծվել էր 1997 թ. օգոստոսի 26-27-ը Ադրբեյջանի նախագահ Հեյդար Ալիևի՝ Լեհաստան կատարած այցի ընթացքում [4, 23]: Այս ժամանակ լայնորեն շրջանառվում էր ադրբեյջանական գազը Վրաստանի տարածքով Եվրոպա փոխադրելու հարցը, որի համար քննարկվում էին լեհական ու ռումինական տարանցման տարբերակները: 1997 թ. Վարչավա կատարած պաշտոնական այցի ընթացքում Ադրբեյջանի նախագահ Հեյդար Ալիևը լեհերին խոստացել էր Վրաստան-Օդեսա-Բրոդի-Գդանսկ նավթամուղի տարանցման տարբերակը առաջ մղել [4, 98]՝ դրանով փորձելով ապահովել լեհերի ադրբեյջանամետ դիրքորոշումը միջազգային կառույցներում:

1998 թ. հունվարից Լեհաստանը ստանձնեց ԵԱՀԿ նախագահու-

թյունը [16] և, այդ ամենով պայմանավորված, ակտիվ դեր ստանձնեց Արցախյան հակամարտությունը դիվանագիտական ճանապարհով լուծելու հարցում: Այդ ժամանակահատվածում լեհ ղեկավար միջավայրում շրջանառվում էր այն կարծիքը, որ ԵԱՀԿ-ում Լեհաստանի նախագահության շրջանակներում հնարավոր էր հասնել հիմնահարցի խաղաղ կարգավորմանը [2, 151]: Հունվարի 27-ին ՀՀ արտաքին գործերի նախարար Ալեքսանդր Արզումանյանի և ԼՀ արտաքին գործերի նախարար Բրոնիսլավ Գերեմեկի միջև Վարշավայում տեղի ունեցած հանդիպմանը լեհ նախարարը հավաստիացնում էր, որ Լեհաստանը ակտիվորեն ներգրավվելու էր դարաբաղյան հակամարտության կարգավորմանը՝ որպես նախագահող երկիր՝ քննարկելով խնդիրը Մինսկի խմբի համանախագահողների հետ [3, 13]: Ըստ Գերեմեկի, Լեհաստանը ցանկանում էր Մինսկի խմբի շրջանակներում հասնել այնպիսի կարգավորման, որ «կբավարարեր բոլոր կողմերին և հիմնված կլիներ բոլոր կողմերի բարի կամքի վրա» [3, 14]: Լեհաստանի նախագահության դիրքորոշումն այս հարցում արտաքին գերատեսչության ղեկավարը բնորոշում էր հետևյալ կերպ՝ «իրատեսություն առանց չափազանց սպասելիքների» [3, 14]: ՀՀ արտաքին գործերի նախարարի և Լեհաստանի նախագահ Ալեքսանդր Կվաշնինսկու հանդիպմանը ևս առանցքային տեղ ունեցող դարաբաղյան հակամարտությունը և Լեհաստանի դերը՝ որպես ԵԱՀԿ նախագահող երկիր: Լեհաստանի նախագահն իր անձնական աջակցությունն էր հայտնում բանակցությունների հաջող ընթացքի համար՝ համոզմունք հայտնելով, որ կողմերի համար կգտնվի ընդունելի լուծում [3, 20; 8, 16-17]:

1998 թվականի ապրիլի 10-ին Լեհաստանում պաշտոնապես բացվեց Հայաստանի Հանրապետության դեսպանություն [3, 57]: Այս հանգամանքը նպաստեց, որպեսզի հայ-լեհական քաղաքական շփումներն ավելի սերտանան, իսկ արցախյան հակամարտության կարգավորման վերաբերյալ քննարկումները կրեն ավելի հաճախակի ու խորը բնույթ: Արդեն իսկ 1998 թ. ապրիլի 28-ին Լեհաստանում ՀՀ գործերի հավատարմատար Աշոտ Հովակիմյանը արցախյան հարցի վերաբերյալ քննարկում ունեցավ Լեհաստանի ԱԳՆ ԵԱՀԿ նախագահության համակարգող թիմի գործադիր տնօրեն դեսպան Յեժի Վենցլավի, Մինսկի խմբում Լեհաստանի ներկայացուցիչ, հատուկ հանձնարարություններով դեսպան Ստանիսլավ Պշիգոդսկու և Եվրոպա-Արևելք դեպարտամենտի Կովկասի և Կենտրոնական Ասիայի բաժնի վարիչ Ստանիսլավ Ստավյարսկու հետ [3, 67]: Այդ ժամանակ քաղաքական փոփոխություններ և, դրանով պայմանավորված, նաև արցախյան հարցում դիրքորոշման փոփոխություն-

ներ էին տեղի ունեցել Հայաստանում: Հանդիպման ընթացքում հայկական կողմի նոր մոտեցումների վերաբերյալ փաստաթուղթը ՀՀ գործերի հավատարմատարը հանձնում է լեհ գործընկերներին, որին հաջորդում է քննարկումը Արցախի ապագա կարգավիճակի վերաբերյալ [3, 68]: Դեսպան Պշիգոդսկու հիմնական հարցը վերաբերում էր հայկական կողմի՝ արցախյան հարցում ինքնավարության կարգավիճակը քննարկելուց հրաժարվելու դիրքորոշմանը: Համեմատություններ են տարվում Կոսովոյի ու Արցախի հակամարտությունների միջև: Լեհական կողմը պատասխանում է հայկական կողմի այն հարցին, թե ինչու Սերբիայի վրա Կոսովոյի ալբանացիների հետ բանակցություններ վարելու ճնշման միջոցը չի տարածվում Ադրբեջանի վրա: Երկու հակամարտությունների համեմատությունը այս ժամանակահատվածում բավականին մեծ հետաքրքրություն է ներկայացնում, մանավանդ, եթե պատմության խորքից վերլուծում ենք աշխարհաքաղաքական զարգացումները. միջազգային ճնշման ներքո տարիներ անց՝ 2008 թ. Կոսովոն անկախություն ստացավ՝ անջատում հանուն փրկության (“secession for salvation”) սկզբունքով: Մինչդեռ 1998 թ. դրությամբ ԵԱՀԿ պաշտոնական շրջանակներում անհնարին էր թվում նման հնարավոր սցենարը: Ըստ Պշիգոդսկու, Կոսովոյում սերբերն էին ճնշում ալբանացիներին, մինչդեռ արցախյան հարցում իրավիճակը հակառակ պատկերն էր ստացել՝ հայերն էին ճնշել ադրբեջանցիներին, ուստի այդ միջոցը կիրառելի չէր [3, 68]: Աշոտ Հովակիմյանի և Ստանիսլավ Պշիգոդսկու՝ 1998 թ. մայիսի 14-ին տեղի ունեցած հանդիպմանն էլ լեհ պաշտոնյան համոզումն էր հայտնում, թե Կոսովոյի օրինակը վկայել է, որ նմանատիպ հակամարտություններում անկախությունը բացառված է, սակայն կա միտում դեպի ավելի բարձր աստիճանի ինքնավարություն [3, 98]: ՀՀ գործերի հավատարմատարի այն պնդմանը, թե վերջնարդյունքում միջազգային ճնշման ներքո բանակցությունների սեղանին նստեցին սերբ ու ալբանացի առաջնորդներ Միլոշևիչն ու Ռուզովան, Պշիգոդսկին հակադարձում է, նշելով, որ ամեն ինչ արվում էր Հարավսլավիայի տարածքային ամբողջականությունը չխախտելու եղանակով: Իր հերթին Հովակիմյանը նկատում է, որ Հարավսլավիան արդեն իսկ դաշնային պետություն էր, ուստի չէր էլ բացառվում, որ միասնական Հարավսլավիա պետության տարածքային ամբողջականությունը պահպանելով, Կոսովոն դառնար առանձին դաշնային սուբյեկտ, ինչպես Սերբիան կամ Չեռնոգորիան: Արդյունքում՝ պետության ներքին կառուցվածքը և ենթարկվածության գործիքակազմը կփոխվեր՝ պահպանելով տարածքային ամբողջականության սկզբունքը [3, 98]:

Նմանատիպ դաշնային կամ համադաշնային կառավարման մոդելով տարբերակներ են քննարկում նաև արցախյան հարցում, սակայն ԵԱՀԿ Մինսկի խմբի հատուկ հանձնարարություններով դեսպանը հիշեցնում է, որ ադրբեջանական կողմը նման մոտեցումն ի սկզբանե մերժել է Ադրբեջանի նախագահի արտաքին քաղաքականության հարցերով պետական խորհրդական Վաֆա Գուլուզադեի միջոցով [3, 98]:

Հերթական անգամ դարաբաղյան հիմնահարցը հայ-լեհական պաշտոնական քննարկման առարկա դարձավ 1998 թ. սեպտեմբերի 21-23-ը Լեհաստանի փոխարտգործնախարար Պշեմիսլավ Գրուձինսկու գլխավորությամբ Հայաստան կատարած այցի ընթացքում: Պատվիրակության հիմնական նպատակը ԵԱՀԿ նախագահող Լեհաստանի արտաքին գործերի նախարար Բրոնիսլավ Գերեմեկի այցը Հայաստան նախապատրաստելն էր, որի ընթացքում քննարկվելիք հիմնական հարցերը վերաբերելու էին արցախյան հակամարտության խաղաղ կարգավորմանն ու ԵԱՀԿ գազաթնաժողովում քննարկվող հարցերին [4, 35]: Հայկական կողմից բարձրացվող ամենակարևոր հարցը Արցախի հայության անվտանգությունը երաշխավորելու խնդիրն էր, որը հնարավոր էին համարում Արցախի և Ադրբեջանի միջև երկկողմ անմիջական բանակցություններ հաստատելու ճանապարհով, որպիսիք չկային: Մատնանշվում էր, որ 1994 թ. մայիսի 12-ին հաստատված հրադադարը պահպանվում էր առանց որևէ խաղաղապահ ուժերի ներկայության [4, 32]: Հետաքրքրական է, որ Գրուձինսկու այն հարցին, թե «ո՞ւմ է ձեռնտու հիմնահարցի այդժյան կարգավիճակը և ժամանակը ում օգտին է աշխատում» հարցին հայկական կողմը պատասխանում է, որ այն ձեռնտու չէ ոչ մի կողմին և չի կարող հանգեցնել պատերազմի, թեպետ Ադրբեջանը հույս է փափագում, որ նավթադուլարներից ստացած շահույթներով կարող է հասնել ռազմական ճանապարհով հակամարտության միակողմանի լուծմանը [4, 33]: Հայկական կողմի ընդհանուր պնդումներն այս շրջանում հանգում էին եռակողմ՝ Հայաստան-Ադրբեջան-Արցախ ձևաչափով բանակցություններով խնդրի խաղաղ կարգավորմանը հասնելուն: Երկկողմ քննարկումների շրջանակում գուզահեռներ տարվեցին նաև տարածաշրջանի այլ հակամարտությունների հետ, մասնավորապես՝ Չեչնիայի և Դաղստանի, որի վերաբերյալ հայկական կողմը նշեց, որ յուրաքանչյուր համակամարտություն յուրովի առանձնահատուկ է և պետք է դիտվի առանձին վերցված: Իսկ լեհական կողմի այն մտահոգությունը, թե արցախյան հարցի հայամետ լուծումը կարող է այլ հակամարտություն-

ների վրա շղթայական ռեակցիայի վտանգ ունենալ, հայկական կողմը բացառեց:

Նախապատրաստական աշխատանքներից հետո դարաբաղյան հիմնահարցը քննարկման առարկա դարձավ Լեհաստանի արտգործնախարար Բրոնիսլավ Գերեմեկի գլխավորությամբ՝ 1998 թ. նոյեմբերի 24-25-ը Հայաստան կատարած այցի ընթացքում [7, 4]: Այն հերթական անգամ քննարկվեց 1999 թ. հուլիսի 13-15-ը Վարշավայում՝ ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանի գլխավորած պաշտոնական այցի շրջանակներում, որն առաջին բարձրագույն մակարդակի այցն էր երկու երկրների պատմության մեջ: Հանդիպմանը, որին մասնակցում էին ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանը, ԼՀ նախագահ Ալեքսանդր Կվաշնևսկին, Հայաստանի արտգործնախարար Վարդան Օսկանյանը, Լեհաստանի ԱԳՆ պետքարտուղար Անջեյ Անանիչը և այլք, ներկայացվեց դարաբաղյան հիմնախնդրի ներկայիս իրավիճակը, շեշտվեց Լեհաստանի ունեցած դերը այդ հիմնահարցը արտգործնախարարների մակարդակով քննարկելու նախաձեռնության և հանդիպումների կազմակերպման օժանդակության համար [5, 66]: Հատկապես բարձր գնահատվեց լեհ դիվանագետ, տարածաշրջանում ԵԱՀԿ նախագահի հատուկ ներկայացուցիչ Անջեյ Կասպ-ժիկի (լեհերեն՝ Andrzej Kasprzyk, հայերեն և ռուսերեն հրապարակումներում շատ է տարածված «Կասպրժիկ» ձևը) ավանդը բանակցությունները վերսկսելու գործում [5, 66]: Ղարաբաղյան հիմնահարցը քննարկվեց նաև հաջորդ օրը երկու երկրների արտգործնախարարներ Օսկանյանի և Գերեմեկի միջև տեղի ունեցած հանդիպման ժամանակ [5, 69]:

ՀՀ ԱԳՆ պատմադիվանագիտական արխիվի նյութերը վկայում են, որ հայ-լեհական հարաբերություններում դարաբաղյան հարցը 2000-ականներին քննարկվում էր հիմնականում այլ բնույթի հանդիպումների շրջանակում: Մասնավորապես՝ 2004 թ. մարտի 15-19-ը Լեհաստանի Հանրապետություն ՀՀ ԱԺ նախագահ Արթուր Բաղդասարյանի գլխավորած պաշտոնական այցի շրջանակներում այն քննարկվեց ԼՀ նախագահի, Մեյմի մարշալի, արտաքին գործերի նախարարի հետ [9, 30-35]: Նախագահ Ալեքսանդր Կվաշնևսկին հայտնեց իր աջակցությունը Հայաստանին եվրոպական ինտեգրացման հարցերում՝ նշելով, որ համատեղ ջանքերով պետք էր լուծել դարաբաղյան հիմնախնդիրը, քանի որ Կովկասը Եվրոպայում պետք է ներկայանար որպես անվտանգության գոտի, իսկ Կովկասի չկարգավորված հակամարտությունները լրջագույն խնդիր էին այդ ճանապարհին [9, 35]:

2004 թ. ապրիլի 28-30-ը Լեհաստանի մայրաքաղաք Վարշավայում

անցկացվեց Եվրոպական տնտեսական գազաթափոցով, որի շրջանակներում ԵԱՀԿ Մինսկի խմբի նախաձեռնությամբ հանդիպում կազմակերպվեց ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանի և Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևի միջև [9, 51]: Նախագահ Քոչարյանը դրական գնահատեց հանդիպման արդյունքները, որի ընթացքում ձեռք բերվեց պայմանավորվածություն շարունակել արտգործնախարարների մակարդակով ԼՂ հիմնահարցի շուրջ երկկողմ խորհրդատվությունները [9, 51]:

Հայ-լեհական պաշտոնական քննարկումներում դարաբաղյան հակամարտության խաղաղ կարգավորման հարցը կենտրոնական դեր ուներ նաև 21-րդ դարի առաջին տասնամյակում: Լեհաստանը՝ որպես Եվրոպական Միության անդամ և այդպիսով նաև Միությունում հնարավոր հայամետ դիրքորոշման բարձրաձայնող, մշտապես կարևորվում էր հայկական դիվանագիտական լոբբիի համար: Դեռևս 2008 թվականից Արցախում աշխատանքներ էին սկսվել Ստեփանակերտի օդանավակայանի վերագործարկման ուղղությամբ, որ պիտի շահագործման հանձնվեր դեռևս 2011 թ. գարնանից, սակայն ադրբեջանական կողմի սպառնալիքները ի չիք դարձրին օդանավակայանի գործարկումը: Այս հարցի կապակցությամբ 2013 թ. հունվարի 4-ին Լեհաստանում ՀՀ դեսպան Աշոտ Գալոյանը ԼՀ ԱԳՆ-ում հանդիպումներ ունեցավ Արևելյան դեպարտամենտի տնօրեն Եվա Ֆիզելի, փոխտնօրեն Մարեկ Ցավկայի և Հարավային Կովկասի հարցերով պատասխանատու Պյոտր Իվաշկևիչի հետ [12, 22]: ՀՀ դեսպանը լեհ դիվանագետներին ներկայացրեց օդանավակայանի գործարկման հետ կապված հայկական կողմի հիմնավորումները, որին ի պատասխան լեհ պաշտոնյաները խոստացան այս առնչությամբ համապատասխան երաշխավորություններ տալ լեհական պատկան մարմիններին և միջազգային կազմակերպություններում ընդգրկված լեհ պատվիրակներին՝ Ադրբեջանի կողմից մարդասիրական այդ խնդիրը շահարկելու ու քաղաքականացնելու փորձերը կանխարգելելու նպատակով [12, 22]:

2014 թ. դեկտեմբերի 1-ին Լեհաստանում ՀՀ նորանշանակ դեսպան Էդգար Ղազարյանը Եվրոպական խորհրդարանի փոխնախագահ, Եվրոնետաթի խորհրդարանական վեհաժողովի պատվիրակության փոխնախագահ Ռիշարդ Չարնեցկու հետ հանդիպմանը, ի թիվս այլ քննարկվող հարցերի, անդրադարձավ նաև դարաբաղյան հակամարտությանը՝ շեշտադրելով, որ ադրբեջանական կողմն այդ հարցում հանդես է բերում ապակառուցողական մոտեցում, որի ապացույցը նոյեմբերի 12-ին ադրբեջանական կողմից հայկական անգեն ՄԻ-24 ուղղաթիռի խոցումն էր [13, 52]:

Լեհաստանի կառավարության 2016 թվականի արտաքին քաղաքականությանը վերաբերող զեկույցում հիշատակվում է, որ Լեհաստանը շարունակելու էր ներդնել իր ջանքերը Հայաստանի և Ադրբեջանի միջև երկխոսության ամրապնդման հարցում [14, 62]: Հայ-լեհական առնչություններում դարաբաղյան հարցը հերթական անգամ շոշափվեց 2016 թ. քառօրյա պատերազմի ընթացքում: ԼՀ ԱԳՆ-ը ապրիլի 3-ին կողմերին կոչ էր արել տարածքային վեճերը լուծել խաղաղ դիվանագիտական ճանապարհով, որպիսի ձևակերպումներով հանդես էին եկել նաև Եվրոպական Միությունն ու մի շարք այլ երկրներ: 2016 թ. ապրիլի 7-ին Լեհաստանում ՀՀ դեսպան Էդգար Ղազարյանը հանդիպում ունեցավ ԼՀ ԱԳՆ Արևելքի վարչության պետի Ժամանակավոր պաշտոնակատար Ռաֆալ Պոբորսկու հետ՝ քննարկելով դարաբաղյան կարգավորման հարցը [14, 23]: ՀՀ դեսպանը ուշադրություն հրավիրեց այն հանգամանքի վրա, որ ԼՀ ԱԳՆ հայտարարության մեջ նշված «տարածքային վեճ» արտահայտությունը դարաբաղյան հարցում ճիշտ ձևակերպում չէր, քանի որ վեճը Հայաստանի ու Ադրբեջանի մեջ չէ, ինդիքն էլ տարածքային չէ [14, 15]: Սրան ի պատասխան լեհ պաշտոնյան պատասխանեց, որ հայտարարությունը հապշտապ ձևով պատրաստվել էր ապրիլի 3-ին՝ կիրակի օրով, ուստի կարող էին տեղ գտած լինել ոչ ճիշտ ձևակերպումներ: Պոբորսկին մեկ անգամ ևս ընգծեց իրենց պետական պատրաստակամությունը դարաբաղյան հարցի խաղաղ հանգուցալուծմանը աջակցելու համար [14, 16]:

2017 թ. փետրվարի 17-ին Լեհաստանի արտաքին գործերի նախարարության կայքում տեղեկություն հրապարակվեց Հայաստան ճանապարհորդել ցանկացողների համար, որով խորհուրդ էր տրվում կտրականապես ձեռնպահ մնալ Հայաստանի և Ադրբեջանի սահմանամերձ բնակավայրեր, ի մասնավորի՝ Տավուշի և Գեղարքունիքի մարզեր ճամփորդելուց՝ «հաշվի առնելով Լեռնային Ղարաբաղում և Ադրբեջանի յոթ շրջաններում (Քելբաջար, Լաչին, Կուրաթլի, Չանգեվան, Ջեբրայիլ, Ֆիզուլի և Ադդամ) աճող լարվածությունը» [15, 8]: Լեհաստանի արտաքին գործերի նախարարությունը հայտարարության մեջ բացատրում էր, որ, ըստ միջազգային իրավունքի, Լեռնային Ղարաբաղը և յոթ շրջանները Ադրբեջանի Հանրապետության տարածքն են, սակայն դուրս են Ադրբեջանի վերահսկողությունից [15, 8]: Այդ իսկ պատճառով, ըստ հայտարարության, Երևանում և Բաքվում գտնվող ԼՀ հյուպատոսությունները չեն կարող որևէ օգնություն տրամադրել այնտեղ գտնվող քաղաքացիներին, ուստի հորդորվում էր զերծ մնալ այդ տարածքներ այցելություններից: 2017 թ. ապրիլի 10-12-ը պաշտոնական այցով Լեհաստանում էր գտնվում

Ադրբեջանի արտաքին գործերի նախարար Էլմար Մամեդյարովը: Թեպետ լեհական աղբյուրները լռեցին այցի ընթացքում Արցախի հիմնահարցի վերաբերյալ որևէ քննարկում ունենալու վերաբերյալ, Ադրբեջանի արտաքին գործերի նախարարությունը հայտարարություն տարածեց, թե Ադրբեջանի արտգործնախարարը շնորհակալություն է հայտնել լեհ գործընկերոջը հարցի լուծումը տարածքային ամբողջականության և միջազգայնորեն ճանաչված սահմաններում Ադրբեջանի ինքնիշխանության սկզբունքների շրջանակներում Լեհաստանի պաշտոնական մոտեցումների համար [15, 13]: Ըստ լեհական աղբյուրների, քննարկված հարցերի շարքում էր նաև Ադրբեջանից դեպի Եվրոպա գազախողովակաշարի գործարկման հարցը, որի ընդհանուր արժեքը գնահատվում էր 45 միլիարդ դոլար և հանդիսանում էր Եվրոպական հանձնաժողովի նախաձեռնություն՝ ռուսական գազից կախվածությունը նվազեցնելու նպատակով [15, 14]: Արցախի խնդրի վերաբերյալ ադրբեջանական տեսակետը Մամեդյարովը արտահայտել է նաև Սեյմի մարշալեկ Մարեկ Կուխչինսկու հետ ունեցած հանդիպմանը, սակայն լեհ պաշտոնյայի կողմից արձագանքի վերաբերյալ որևէ տեղեկություն չկա [15, 15]: Պաշտոնական Լեհաստանը շարունակեց արցախյան հարցում դրսևորած հավասարակշռված և զգուշավոր դիրքորոշումը ամբողջ 2017 և 2018 թվականների ընթացքում՝ զերծ մնալով այնպիսի հայտարարություններից և գործողություններից, որ կարող էին առաջացնել տարակուսանք Հայաստանում կամ Ադրբեջանում: Բավ է նշել միայն, որ 2017 թ. մայիսի 27-ին Վարշավայի համալսարանի աշխարհագրության ակումբում նախապես հայտարարված «Հայաստանն ու Լեռնային Ղարաբաղը» թեմայով միջոցառումը ընթացավ առանց Արցախի մասին անդրադարձի միայն այն պատճառով, որ Լեհաստանում Ադրբեջանի դեսպանությունը վրդովմունք էր արտահայտել Արցախի վերաբերյալ նյութեր ցուցադրելու մասով: Հղում անելով ԼՀ ԱԳՆ այն հայտարարությանը, որ Լեհաստանը ճանաչում է Ադրբեջանի տարածքային ամբողջականությանը, ադրբեջանական դիվանագիտական կառույցը հորդորել էր զերծ մնալ Արցախի վերաբերյալ նյութեր ցուցադրելուց, որն էլ բավարարվել էր լեհերի կողմից [15, 6]:

Ղարաբաղյան հակամարտությունը լեհական մամուլում

Լեհաստանի արտաքին գործերի նախարար, ԵԱՀԿ նախագահող Բրոնիսլավ Գերեմեկի այցը Հայաստան և Ադրբեջան նպաստեց լեհական մամուլում ղարաբաղյան հակամարտության վերաբերյալ տարաբնույթ հրապարակումների ի հայտ գալուն: Լեհական «Ժեչպոսպոլիտա» թերթի

1998 թ. նոյեմբերի 25-ի հոդվածում տեղեկատվական ձևով ներկայացվում է Լեհաստանի արտաքին գործերի նախարարի մեկօրյա այցը Հայաստան, հանդիպումները Հայաստանի նախագահ Ռոբերտ Քոչարյանի և արտաքին գործերի նախարար Վարդան Օսկանյանի հետ՝ ԵԱՀԿ միջնորդությամբ դարաբաղյան հակամարտությունը խաղաղ ճանապարհով հանգուցալուծելու վերաբերյալ [5, 154]: Նույն թերթի 1998 թ. նոյեմբերի 27-ի համարում «Բանակցությունների ակնկալիքով» հոդվածում ներկայացվում էր Ադրբեջանի նախագահ Հեյդար Ալիևի կողմից Մինսկի խմբի առաջարկությունը մերժելը, որ նախատեսում էր Ադրբեջանի կողմից ստեղծել համատեղ պետություն Լեռնային Ղարաբաղի հետ [5, 153]: Հոդվածում հակիրճ ձևով ներկայացվում էր դարաբաղյան հակամարտության էությունն ու հակիրճ նախապատմությունը, արցախյան առաջին պատերազմի արդյունքները, Լեռնային Ղարաբաղի չճանաչված լինելը միջազգայնորեն: Ընդ որում՝ Լեռնային Ղարաբաղը ներկայացվում էր որպես Ադրբեջանում գտնվող ըմբոստացած մի անկլավ՝ զավթված իրենց անկախ համարող հայերի կողմից: Ըստ ամսագրի՝ արցախահայերը համաձայն էին ստեղծել համատեղ պետություն Ադրբեջանի հետ, պայմանով, որ երկու կողմերի գործակցությունը լիներ գործընկերային և հիմնված լիներ հավասար հիմունքների և ոչ կախվածության վրա: Անդրադարձ է կատարվում Լեհաստանի արտաքին գործերի նախարար Գերեմեկի կողմից, որպես ԵԱՀԿ նախագահող, Երևանում և Բաքվում անցկացրած բանակցություններին՝ հիմնահարցը ԵԱՀԿ Մինսկի խմբի շրջանակում խաղաղ ճանապարհով հանգուցալուծելու նպատակով: Հոդվածում հիշատակվում է Արցախի երկրորդ նախագահ Արկադի Ղուկասյանի (ներկայացվում է որպես հայկական անկլավի նախագահ)՝ նախարար Գերեմեկի հետ հանդիպման ժամանակ արված այն հայտարարությունը, թե Լեռնային Ղարաբաղը երբեք չի հրաժարվի անկախությունից, որը հայերին թույլ է տալիս իրենց ճակատագիրը տնօրինել սեփական հայեցողությամբ [5, 153-154]:

Լեհական մեկ այլ՝ «Կուրիեր Պոլսկի» թերթի 1998 թ. նոյեմբերի 24-ի «Լեհական առաքելությունը Վրաստանում» հոդվածում ներկայացվում է արտգործնախարար Գերեմեկի այցը Վրաստան, որի հիմնական նպատակը կովկասյան հակամարտությունների վերաբերյալ լուծումներ գտնելն էր [5, 154]: Այնուհետև Աբխազիայի և Ինգուշեթիայի հակամարտությունների հետ ներկայացվում է նաև Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը: Այստեղ ևս Արցախը ներկայացվում է որպես Ադրբեջանում գտնվող հայկական անկլավ, որ պայքարում է անկախության կամ

Հայաստանի հետ վերամիավորման համար: Իսկ Արևմուտքը փորձում է լուծում գտնել հակամարտության խաղաղ հանգուցալուծման համար՝ որպես տարբերակ առաջարկելով Ադրբեջանի կազմում բարձրագույն արտահայտմամբ ինքնավարություն տրամադրելը: Արցախյան հակամարտությունը ներկայացվում է որպես ԽՍՀՄ-ի փլուզման պատճառներից մեկը: Համեմատական օբյեկտիվ ձևով ներկայացվում է հակամարտության համառոտ նախապատմությունը՝ նշելով, որ 1920-ական թթ. Լեռնային Ղարաբաղը բռնի կերպով միացվել էր Ադրբեջանին [5, 155]:

«Նաշ Զիեննիկ» թերթի 1998 թ. նոյեմբերի 26-ի «Թեժ Ղարաբաղ» հոդվածում էլ ներկայացվում էր, որ Հայաստանը և Ղարաբաղը համաձայն են, որ ԵԱՀԿ-ի Մինսկի խմբի կողմից նախապատրաստված առաջարկությունները հիմք հանդիսանան «հայկական անկլավի» ապագա կարգավիճակի համար տարվող բանակցությունների համար [5, 155]: Ընդ որում, նշվում է, որ բանակցությունների երեք կողմերը՝ Հայաստանը, Ղարաբաղը և Ադրբեջանը, տեղյակ էին, որ բանակցությունների համար հիմք է լինելու Ադրբեջան-Ղարաբաղ համատեղ պետության դրույթը, որն առաջարկել էին ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահներ Ռուսաստանը, Ֆրանսիան և Միացյալ Նահանգները [5, 156]: Համատեղ պետության առաջարկը Ադրբեջանի կողմից մեկ շաբաթ անց մերժվել էր: Առաջարկի մանրամասները գաղտնի էին պահվում, սակայն, ըստ թերթի ոչ պաշտոնական տեղեկատվության, այն վերաբերելու էր Ադրբեջանի և Ղարաբաղի միջև իրավասությունների բաժանմանը: Մեջբերվում էր նաև Արցախի նախագահ Արկաղի Ղուկասյանի խոսքը, թե Լեռնային Ղարաբաղը պատրաստ է աշխատել համագործակցության, այլ ոչ թե կախվածության սկզբունքով, զիջումների մասով էլ պատրաստ կլինի այն պարագայում, երբ Ադրբեջանը ևս իր քայլերն անի ընդառաջ: Այս հոդվածում ևս ներկայացվում էր հիմնահարցի սեղմ նախապատմությունը՝ Ստալինի միանձնյա որոշմամբ 1921 թ. Լեռնային Ղարաբաղը բռնի կերպով Ադրբեջանի կազմ մտցնելն ու առաջին պատերազմի արդյունքները, դե ֆակտո անկախ երկրի չճանաչված լինելը միջազգային հանրության կողմից [5, 156]:

Ղարաբաղյան թեման լեհական մամուլում պահպանում էր արդիականությունը նաև 2000-ականների սկզբին: Մասնավորապես 2003 թ. «Ժեչպոսպոլիտա», «Գազետա Վիբորչա» և «Նովե Պանստովո» թերթերում ծավալուն հոդվածներ էին տպագրվում Ադրբեջանի ու Լեռնային Ղարաբաղի վերաբերյալ [10, 25]: Տարածաշրջանի նկատմամբ լեհ լրագրողների հետաքրքրությունը պայմանավորված էր Ադրբեջանի նախագահական

ընտրություններով, որը մեկնաբանելու նպատակով «Ժեչպոսպոլիտա» և «Գազետա Վիբորչա» թերթերը սեփական թղթակիցներ էին գործուղել Բաքու [10, 25]: Հոդվածագրերը հիմնականում նվիրված էին Ադրբեջանի նախկին նախագահ Հեյդար Ալիևի ինչպես խորհրդային տարիների, այնպես էլ հետխորհրդային ժամանակաշրջանի քաղաքական գործունեությանը և Ադրբեջանի ներքաղաքական իրավիճակին: Հոդվածներում շեշտվում էր այն հանգամանքը, որ Ադրբեջանում միանձնյա իշխանություն էր, իսկ տնտեսության բոլոր եկամտաբեր ոլորտները գտնվում էին նախիջևանյան կլանի ձեռքում: Իլիամ Ալիևի նախագահ ընտրվելը, ըստ «Գազետա Վիբորչա»-ի, հետխորհրդային տարածաշրջանում առաջին դեպքն էր, երբ նախագահի պաշտոնը հորից փոխանցվելու էր որդուն: Սակայն սա չի ընկալվում որպես բացառիկ երևույթ՝ վկայակոչելով աշխարհի այլ ոչ միապետական երկրների օրինակներ, որտեղ իշխանությունը փոխանցվել է ժառանգաբար (օր.՝ ԱՄՆ, Հնդկաստան, Բնդոնեգիա, Ֆիլիպիններ և այլն) [10, 25]: Լեհ լրագրողների կարծիքով, Իլիամ Ալիևի նախագահ ընտրվելուց հետո հիմնական հակասությունն ընթանալու էր ոչ թե ընդդիմության հետ, այլ կառավարող կլանի ներսում, որ սկսելու էր բաժանել հարստությունն ու իշխանությունը ավագ Ալիևի մահից հետո [10, 25]: Ուշագրավ են նաև լեհական մամուլի գնահատականները տեղի ունեցած ընտրություններում մասսայական ընտրախախտումների վերաբերյալ: «Ժեչպոսպոլիտա» թերթը հրապարակել էր ԵԱՀԿ լեհ դիտորդ Գժեգոժ Գուրնիի «Ինչպես են կեղծվել ընտրությունները» հոդվածը, որտեղ հեղինակը նշում է, որ ընտրությունները սկզբից մինչև վերջ կեղծվել են: Նա անհամաձայնություն է հայտնում ԵԱՀԿ դիտորդական առաքելության կարծիքին, թե «չնայած ընտրությունները չեն համապատասխանել ժողովրդավարության միջազգային չափանիշներին, այնուամենայնիվ, բացասական երևույթները չպետք է ստվեր զցեն դրական տեղաշարժերի վրա»: «Չի կարելի համաձայնել ստի հետ», ամփոփելով հոդվածը, արձանագրում է Գուրնին՝ հավելելով, որ ինքն իր համար կարծեզրկվեր, եթե լռեր այդ հարցի վերաբերյալ, իսկ իր ներկայությունը ոչ մի կերպ չի լեգիտիմացնում ԵԱՀԿ դիրքորոշումը [10, 26]:

«Ժեչպոսպոլիտա» թերթի մեկ այլ համարում տպագրված «Ղարաբաղի պետություն» վերնագրով հոդվածի հեղինակը ներկայացրել է Արցախի տվյալ ժամանակի դե ֆակտո և դե յուրե կարգավիճակները, ԵԱՀԿ Մինսկի խմբի դերը և ջանքերը խնդրի կարգավորման ուղղությամբ, ինչպես նաև Արցախ-Հայաստան հարաբերությունները: Հեղինակը մատնանշում է, որ թեև Լեռնային Ղարաբաղը միջազգայնորեն չի

ճանաչվել, սակայն հայերը վճռական են պահպանելու պատերազմից հետո ստեղծված իրողությունը, երկրում օրըստօրե ամրապնդվում են պետական կառույցները, և Արցախն անգամ իր ներկայացուցչություններն ունի արտերկրում [10, 26]: «Գազետա Վիբորչա» թերթի «Մառեցված Ղարաբաղ» հոդվածում էլ, որի հեղինակը «Մոսկովսկիե Նովոստի» շաբաթաթերթի միջազգային բաժնի նախկին ղեկավար, ազգությամբ ռուս Դմիտրի Բաբիչն է, այն կարծիքն է առաջ մղվում, թե Լեռնային Ղարաբաղի հակամարտության սառեցումը չի լուծել հակամարտության հիմնական խնդիրները, իսկ իրավիճակի ապակայունացումը կլինի նորընտիր նախագահ Իլիամ Ալիևի իշխանության մեծագույն վտանգը: Իսկ իրավիճակի ապասառեցումը կարող են իրականացնել միայն հայերն ու ադրբեջանցիները [10, 26]:

Հայ-լեհական համագործակցությունը դարաբաղյան հակամարտության կարգավորման հարցում միջազգային կազմակերպությունների շրջանակներում

Հայ-լեհական առնչությունները դարաբաղյան հակամարտության վերաբերյալ հետաքրքրություն են ներկայացնում նաև երկու երկրների՝ միջազգային համագործակցության շրջանակներում արձանագրված իրողությունների մասով: Մինչ ԵՄ անդամակցելը, Լեհաստանը միջազգային ասպարեզներում դարաբաղյան հարցի վերաբերյալ քննարկումներում հիմնականում վարում էր չեզոք և հավասարակշիռ, երբեմն՝ ադրբեջանամետ քաղաքականություն, որի վկայություններն են ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի նստաշրջանների քվեարկությունները: «Համագործակցություն ՄԱԿ-ի և ԵԱՀԿ-ի միջև» բանաձևին ադրբեջանական լրացման քվեարկության ժամանակ (լրացման մեջ Լեռնային Ղարաբաղը նշվում է որպես Ադրբեջանի մարզ) Լեհաստանը ձեռնպահ է քվեարկել 1996, 1999, 2000 և 2001 թվականներին, կողմ՝ 1997 և 1998 թվականներին [13, 4]: Փաստերը համադրելով՝ կարող ենք պնդել, որ ներկայացված վերջին երկու քվեարկություններն անմիջականորեն կապ ունեն 1997 թվականին Ադրբեջանի նախագահ Հեյդար Ալիևի՝ Լեհաստան կատարած պետական այցի հետ, որտեղ լեհերին խոստումներ էին տրվել ադրբեջանական նավթը Եվրոպա Լեհաստանի տարածքով տարանցելու վերաբերյալ: Եվրոպական Միությանը անդամագրվելուց հետո այս հարցի առնչությամբ միջազգային քննարկումներում Լեհաստանի դիրքորոշումը հիմնականում բխում էր ԵՄ միացյալ հայեցակարգից, որ գերազանցապես ձեռնպահ և չեզոք էր: Այսպես՝ ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի նստա-

շրջաններում Հայաստանին ուղղակիորեն առնչվող «Համագործակցություն ՄԱԿ-ի և ԵԱՀԿ-ի միջև» բանաձևին ադրբեջանական լրացման քվեարկության ժամանակ, որտեղ Լեռնային Ղարաբաղը նշվում էր որպես Ադրբեջանի մարզ, ԵՄ միասնական դիրքորոշման համաձայն, Լեհաստանը մշտապես հանդես էր գալիս չեզոք կարգավիճակով [11, 6]: Համանման ձեռնպահ քվեարկություն է արվել նաև 2004 թ. սեպտեմբերին՝ ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 59-րդ նստաշրջանին, որտեղ ադրբեջանական կողմը ներկայացրել էր «Ադրբեջանի բռնագավթված շրջանների իրավիճակը» կետը օրակարգում ընդգրկելու վերաբերյալ առաջարկ [11, 6; 13, 4]: 2006 թ. դեկտեմբերին ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 61-րդ նստաշրջանի օրակարգում «ՎՈՒԱՄ-ի տարածաշրջանում չկարգավորված հակամարտություններ» կետի ընդգրկման առնչությամբ Լեհաստանը ԵՄ անդամ երկրների մեծամասնության նման ձեռնպահ է քվեարկել կազմակերպության կողմից նման առաջարկության՝ նստաշրջանի օրակարգ մտնելուն [11, 6]: Նույն ժամանակահատվածում երկու երկրների արտաքին գերատեսչությունների հանդիպման ընթացքում այս հարցը քննարկվել է ՀՀ ԱԳՆ-ում, որտեղ հայկական կողմը արձանագրել է, որ ղարաբաղյան հարցը ԵԱՀԿ Մինսկի խմբի շրջանակներում գտնվում է բանակցային փուլում և Լեռնային Ղարաբաղի և ցանկացած այլ հակամարտության միջև զուգահեռներ անցկացնելն ու ընդհանրացնելը անընդունելի է՝ հիմք ընդունելով դրանց խորքային առանձնահատկությունները [11, 6]: Ըստ Լեհաստանի արտաքին գործերի նախարարի տեղակալ Պավել Կովալի, ով 2007 թ. հունիսի 18-19-ը դիտորդի կարգավիճակով մասնակցել էր Բաքվում կայացած «Ժողովրդավարության և տնտեսական զարգացման (ՎՈՒԱՄ (Վրաստան, Ուկրաինա, Ադրբեջան, Մոլդովա))» կազմակերպության անդամ երկրների գագաթաժողովին, կազմակերպության անդամ երկրների, այդ թվում՝ Ադրբեջանի հետ Լեհաստանի մտերմությունը չի խոչընդոտում հայ-լեհական հարաբերությունների սերտացմանը, և լեհական կողմը մշտապես քաջալերել է ադրբեջանցիներին ղարաբաղյան հարցում երկխոսության ճանապարհով գտնել հակամարտության խաղաղ կարգավորման բանալին [11, 55]: Ըստ լեհ բարձրաստիճան պաշտոնյայի՝ բացի անդամ երկրների հետ խորացող բարիդրացիական հարաբերություններից, իրենց հիմնական հետաքրքրությունը կազմակերպության նկատմամբ տնտեսական է՝ պայմանավորված Օդեսա-Բրոդի-Գդանսկ նավթամուղի միջոցով ադրբեջանական նավթը Լեհաստան ներմուծելու հավանականությամբ [11, 5]: Այդուհանդերձ, անհրաժեշտ է նշել, որ գագաթաժողովին համատեղ իրապարակված հայտարար-

րության մեջ Լեհաստանը վերահաստատում էր հավատարմությունն այն սկզբունքին, որ «ՎՈԻԱՍ» երկրներին առնչվող հակամարտությունների վերջնական կարգավորման արդյունքում պահպանվի այդ երկրների տարածքային ամբողջականությունը միջազգայնորեն ճանաչված սահմանների շրջանակներում [11, 62]: Հայտարարությունը, ի տարբերություն ԱՄՆ-ի և Ճապոնիայի հետ համատեղ ընդունած համեմատաբար մեղմ հայտարարությունների, առավել ընդգծված աղբբեջանամետ էր:

Այդուհանդերձ, 2008 թ. ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 62-րդ նստաշրջանում ևս, որտեղ Աղբբեջանը կրկին ներկայացրել էր «Իրավիճակը Աղբբեջանի գրավյալ տարածքներում» բանաձևը, Լեհաստանը կրկին ձեռնպահ է քվեարկել [13, 4]:

Ղարաբաղյան հարցում միջազգային որոշումներ և բանաձևեր ընդունելու տեսանկյունից կարևոր դեր ունեն Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովը, որտեղ աղբբեջանական կողմը պարբերաբար փորձում էր հակահայկական բանաձևերով միջազգային ճնշում գործադրել հիմնախնդրին աղբբեջանամետ լուծումներ տալու նպատակով: ԵՄԽՎ 2016 թվականի ձմեռային նստաշրջանին առաջ էին քաշվել երկու հակահայկական զեկույցներ՝ փաստաթուղթ N° 13930-ը («Բռնության աճը Լեռնային Ղարաբաղում և Աղբբեջանի այլ բռնագավթված տարածքներում [17]»)՝ Միացյալ Թագավորությունը ներկայացնող Ռոբերտ Ուոլթերի հեղինակությամբ, և փաստաթուղթ N° 13931-ը («Աղբբեջանի սահմամերձ շրջանների բնակիչների բռնի կերպով գրկված են ջրից [18]»)՝ Բոսնիա և Հերցեգովինան ներկայացնող պատգամավոր Միլիցա Մարկովիչի հեղինակությամբ [19]: Երկու զեկույցների հիման վրա, որոնք աննախադեպ սուբյեկտիվ հակահայկական բնույթ ունեին, քվեարկությամբ ընդունվելու էին բանաձևեր, որ լուրջ հարված էր լինելու հայկական դիվանագիտությանն ու ղարաբաղյան հիմնահարցին: Այդ նպատակով խիստ կարևորվում էր ԵՄԽՎ անդամ երկրներում ճիշտ և նպատակային դիվանագիտական աշխատանքը: Այս հարցի առնչությամբ 2016 թ. հունվարի 12-15-ը Լեհաստանի Սեյմում, Սենատում և արտաքին գործերի նախարարությունում մի շարք հանդիպումներ ունեցան ՀՀ ԱԺ արտաքին հարաբերությունների մշտական հանձնաժողովի նախագահ Արտակ Ջաքարյանը, ՀՀ ԱԺ պետաիրավական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ, հայ-լեհական միջխորհրդարանական բարեկամության խմբի ղեկավար Հովհաննես Մահակյանը և Լեհաստանում ՀՀ դեսպան Էդգար Ղազարյանը [17, 56-57]: Մասնավորապես՝ հանդիպումներ են տեղի ունեցել Լեհաստանի Սեյմի փոխմարշալ, ԵՄԽՎ-ում Լեհաստանի

պատվիրակության անդամ Գժեգոժ Չելեյի, Լեհաստանի 8-րդ գումարման Մենատի պատգամավոր, «Քաղաքացիական պլատֆորմ» կուսակցության անդամ, արմատներով հայ Լուկաշ Աբգարովիչի հետ [14, 54-55]: Հայկական կողմը խնդրեց առաջնորդվել օբյեկտիվ և անաչառ դիրքորոշմամբ, որով դարաբաղյան հարցում առաջնորդվում էր պաշտոնական Լեհաստանը, ինչպես նաև համապատասխան տեղեկություններ փոխանցել ԵՖԽՎ-ում ներկայացված լեհ պատգամավորներին, որպեսզի քվեարկության ընթացքում նրանք առաջնորդվեին Լեհաստանի որդեգրած հավասարակշռված և օբյեկտիվ դիրքորոշմամբ: ԼՀ արտաքին գործերի փոխնախարար Մարեկ Ժիովկովսկու հետ հանդիպմանն էլ հայկական կողմը նշեց, որ երկու այդ բանաձևերը մշակվել են՝ խախտելով հավասարակշռության, օբյեկտիվության և բազմակողմանիության սկզբունքները: Ջեկույցների հեղինակները, չնայած համապատասխան հրավերների առկայությանը, չեն կատարել այցելություններ Հայաստան և Լեռնային Ղարաբաղ, լիարժեք կերպով չեն ծանոթացել իրավիճակին, որի արդյունքում զեկույցներում տեղ են գտել այնպիսի ձևակերպումներ, որոնք ոչ միայն հեռու են իրականությունից, այլև չեն համապատասխանում ԵԱՀԿ Մինսկի խմբի շրջանակներում ընթացող խաղաղ բանակցությունների ընթացքում հրապարակվող պաշտոնական հայտարարությունների ոգուն և տրամաբանությանը [14, 53]: Նման զեկույցների հիման վրա բանաձևերի ընդունումը կարող էր հող նախապատրաստել Ադրբեյջանի ռազմատենչ ծրագրերի իրականացման ու տարածաշրջանի անվտանգության խաթարման համար: Չնայած տարված աշխատանքին՝ 2016 թվականի հունվարի 26-ին Միլիցա Մարկովիչի զեկույցի հիման վրա ընդունվեց խիստ հակահայկական բանաձև՝ 98 կողմ, 71 դեմ և 40 ձեռնպահ ձայների հարաբերակցությամբ [20]: ԵՖԽՎ-ում ներկայացված 12 լեհ պատգամավորների ձայները բաշխվել են հետևյալ կերպ՝ 10 ձեռնպահ, 1 կողմ և մեկ դեմ [21], որ օբյեկտիվորեն արտահայտեց դարաբաղյան հարցում Լեհաստանի չեզոք դիրքորոշումը: Անգլիացի պատգամավորի հեղինակած հակահայկական զեկույցը չընդունվեց:

Եզրակացություն

Ղարաբաղյան հակամարտության կարգավորման հարցը հայ-լեհական երեսնամյա երկկողմ առնչություններում մշտապես ունեցել է կարևոր նշանակություն: Որպես ԵԱՀԿ նախագահող երկիր՝ 1998 թ. Լեհաստանը ջանքեր է գործադրել հակամարտությունը երկկողմ ընդունելի պայմաններով լուծելու ուղղությամբ: Դրանով պայմանավորված՝

լեհական մամուլում լայն արձագանք են գտել դարաբաղյան հակամարտության վերաբերյալ տարաբնույթ հրապարակումները: Հետադարձ հայացք գցելով պատմական ոչ վաղ անցյալին՝ առավել քան երբևէ արդիական է նմանատիպ թեմաների ուսումնասիրությունը՝ հակամարտության հայանպաստ խաղաղ հանգուցալուծման բաց թողնված հնարավորությունները վերհանելու, դիվանագիտական աշխատանքի թերացումներին առերեսվելու և անհրաժեշտ հետևություններ անելու նպատակով:

Գրականություն

1. ՀՀ ԱԳՆ պատմադիվանագիտական արխիվ, Եվրոպայի երկրների վարչություն, երկկողմ հարաբերությունների երկրորդ բաժին, ցուցակ 1, գործ № 222, էջերի քանակը՝ 154:
2. ՀՀ ԱԳՆ պատմադիվանագիտական արխիվ, Եվրոպայի երկրների վարչություն, երկկողմ հարաբերությունների երկրորդ բաժին, ցուցակ 2, գործ № 113, էջերի քանակը՝ 198:
3. ՀՀ ԱԳՆ պատմադիվանագիտական արխիվ, Եվրոպայի երկրների վարչություն, երկկողմ հարաբերությունների երկրորդ բաժին, ցուցակ 3, գործ № 213, էջերի քանակը՝ 163:
4. ՀՀ ԱԳՆ պատմադիվանագիտական արխիվ, Եվրոպայի երկրների վարչություն, երկրորդ եվրոպական բաժին, ցուցակ 3, գործ № 214, էջերի քանակը՝ 100:
5. ՀՀ ԱԳՆ պատմադիվանագիտական արխիվ, Եվրոպայի երկրների վարչություն, երկրորդ եվրոպական բաժին, ցուցակ 3, գործ № 215, էջերի քանակը՝ 169:
6. ՀՀ ԱԳՆ պատմադիվանագիտական արխիվ, Եվրոպայի երկրների վարչություն, երկրորդ եվրոպական բաժին, ցուցակ 5, գործ № 32, էջերի քանակը՝ 176:
7. ՀՀ ԱԳՆ պատմադիվանագիտական արխիվ, Եվրոպայի երկրների վարչություն, երկրորդ եվրոպական բաժին, ցուցակ 7, գործ № 60, էջերի քանակը՝ 210:
8. ՀՀ ԱԳՆ պատմադիվանագիտական արխիվ, Եվրոպայի երկրների վարչություն, երկկողմ հարաբերությունների երկրորդ բաժին, ցուցակ 9, գործ № 26, էջերի քանակը՝ 89:
9. ՀՀ ԱԳՆ պատմադիվանագիտական արխիվ, Եվրոպայի երկրների վարչություն, երկրորդ եվրոպական բաժին, ցուցակ 10, գործ № 51, էջերի քանակը՝ 87:

10. ՀՀ ԱԳՆ պատմադիվանագիտական արխիվ, Եվրոպայի երկրների վարչություն, երկրորդ եվրոպական բաժին, ցուցակ 10, գործ № 52, էջերի քանակը՝ 109:
11. ՀՀ ԱԳՆ պատմադիվանագիտական արխիվ, Եվրոպայի երկրների վարչություն, երկրորդ եվրոպական բաժին, ցուցակ 13, գործ № 50, էջերի քանակը՝ 120:
12. ՀՀ ԱԳՆ պատմադիվանագիտական արխիվ, Եվրոպայի երկրների վարչություն, երկրորդ եվրոպական բաժին, ցուցակ 19, գործ № 57, էջերի քանակը՝ 123:
13. ՀՀ ԱԳՆ պատմադիվանագիտական արխիվ, Եվրոպայի երկրների վարչություն, երկրորդ եվրոպական բաժին, ցուցակ 20, գործ № 47, էջերի քանակը՝ 85:
14. ՀՀ ԱԳՆ պատմադիվանագիտական արխիվ, Եվրոպայի երկրների վարչություն, երկրորդ եվրոպական բաժին, ցուցակ 22, գործ № 7 ՕՕՀ, էջերի քանակը՝ 120:
15. ՀՀ ԱԳՆ պատմադիվանագիտական արխիվ, Եվրոպայի երկրների վարչություն, երկրորդ եվրոպական բաժին, ցուցակ 23, գործ № 6 ՕՕՀ, էջերի քանակը՝ 151:
16. ԵԱՀԿ պաշտոնական կայք. <https://www.osce.org/cio/52581>
17. ԵՆԽՎ պաշտոնական կայք. <https://pace.coe.int/en/files/22255/html>
18. ԵՆԽՎ պաշտոնական կայք. <https://pace.coe.int/en/files/22290>
19. ԵՆԽՎ պաշտոնական կայք. <https://pace.coe.int/en/pages/session-201601>
20. ԵՆԽՎ պաշտոնական կայք. <https://pace.coe.int/en/files/22429#trace-3>
21. ԵՆԽՎ պաշտոնական կայք. <https://pace.coe.int/en/votes/35800>
22. Լեհաստանի սեյմի պաշտոնական կայք.
<https://www.sejm.gov.pl/Sejm9.nsf/v4Komunikat.xsp?documentId=19373E73D1025C9AC12583EE00617F1E&lang=EN>
23. Լեհաստանի կառավարության պաշտոնական կայք.
<https://www.gov.pl/web/national-defence/poland-in-nato-20-years#:~:text=Since%201996%2C%20first%20as%20a,14%20missions%20and%20Allied%20operations.>

Вопрос Карабахского конфликта в армяно-польских отношениях в 1991-2018 гг.

Матинян Генри

Резюме

Ключевые слова: Армения, Польша, Карабах, война, мир, переговоры, обсуждение, статус

Одним из приоритетов внешней политики независимой Республики Армения было формирование проармянской международной позиции по карабахскому конфликту. В январе 1998 г. Польша приняла председательство в ОБСЕ. В связи с этим она приняла активное участие в решении карабахского конфликта дипломатическим путем. В то время польское руководство придерживалось мнения, что мирное урегулирование вопроса возможно в рамках польского председательства. По словам министра иностранных дел Польши Бронислава Геремека, Польша была намерена принимать активное участие в урегулировании нагорно-карабахского конфликта в качестве действующего председателя ОБСЕ, обсуждая этот вопрос с сопредседателями Минской группы. Польша хотела достичь урегулирования в рамках Минской группы, которое удовлетворило бы все стороны, на основе доброй воли всех сторон. Позиция Республики Польша по этому вопросу была определена следующим образом: реализм без завышенных ожиданий.

10 апреля 1998 года в Польше было официально открыто Посольство Республики Армения. Это обстоятельство способствовало более тесным армяно-польским политическим контактам, а дискуссии по урегулированию арцахского конфликта участились и стали более глубокими. Материалы историко-дипломатического архива Министерства иностранных дел Республики Армения свидетельствуют о том, что на протяжении последних более 20 лет вопрос урегулирования арцахского конфликта всегда находился в армяно-польских отношениях на высоком уровне. Этот вопрос привлек внимание общественности в Республике Польша, о чем свидетельствуют многочисленные и разнообразные публикации в польской прессе того времени.

The Issue of the Karabakh Conflict in Armenian-Polish relations during the Period of 1991-2018

Matinyan Henri

Summary

Key words: *Armenia, Poland, Karabakh, war, peace, negotiation, discussion, status.*

One of the priorities of the independent Republic of Armenia's foreign policy was the formation of a pro-Armenian international position on the Karabakh conflict. In January 1998, Poland assumed the OSCE chairmanship. In this regard, it took an active part in resolving the Karabakh conflict through diplomacy. At that time, the Polish leadership had a conviction that a peaceful settlement of the issue was possible within the framework of the Polish presidency. According to the Polish Foreign Minister Bronisław Geremek, Poland intended to take an active role in the settlement of the Nagorno-Karabakh conflict as the OSCE Chairman-in-Office, discussing this issue with the co-chairs of the Minsk Group. The Republic of Poland aimed to reach a settlement within the Minsk Group that would satisfy all parties, based on the goodwill of all parties. The position of the Republic of Poland on this issue was defined as follows: realism without high expectations.

On April 10, 1998, the Embassy of the Republic of Armenia was launched in Poland. This circumstance contributed to closer Armenian-Polish political contacts, and discussions on the settlement of the Karabakh conflict became more frequent and deeper. The materials of the historical and diplomatic archive of the Ministry of Foreign Affairs of the Republic of Armenia testify that over the past 20 years, the issue of the settlement of the Artsakh conflict has always been in Armenian-Polish high-level relations. This issue attracted public attention in the Republic of Poland, as evidenced by numerous publications in the Polish press of that time.

Ներկայացվել է 14.10.2022 թ.

Գրախոսվել է 02.11.2022 թ.

Ընդունվել է ստագրությամբ 25.11.2022 թ.